ՀՀ ԱԱՏՄ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՍՈՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԱՏՄ Արևմտյան տարածքային կենտրոնի դեղերի շրջանառության վերահսկողության բաժնի փորձագետի կողմից 2026 թվականի մայիսի 06-ից 2026 թվականի օգոստոսի 06-ը իրականացրած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ գործառույթները՝

1. Ընդգրկված եմ եղել «ԱՐՍ ԱՌ ՖԱՐՄ», «ԽՆԿՈՒՀԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ» ՍՊԸ-ներում և «ԱՐՍԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ ՋԻՎԱՆԻ», «ԱԼՄԱՍՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԺԻՐԱՅՐԻ», «ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՁ-ներում իրականացվող թեմատիկ ստուգումներում:

2. Վերոնշյալ թեմատիկ ստուգումների շրջանակներում պատրաստել եմ գրություններ՝ Առողջապահության նախարարություն՝ ստուգվող կազմակերպություններում տրված լիցենզիաների վերաբերյալ, հսկիչ գնմամբ գնված կասկած հարուցող դեղերի վերաբերյալ և Պետական եկամուտների կոմիտե՝ 2024 թվականի մարտի 01-ից մինչ օրս և մանրածախ կարգով իրացված դեղերի վերաբերյալ, ինչպես նաև դեղատների կողմից դեղերի մեծածախ իրացման վերաբերյալ տեղեկություն ստանալու համար:

3. Ընդգրկված եմ եղել «ԳԱՅԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆԻ» ԱՁ-ում իրականացվող թեմատիկ ստուգման մեջ, որի շրջանակներում կազմվել է ստուգման ակտ:

4. Ընդգրկված եմ եղել «ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ», «ԱՐՍԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ ՋԻՎԱՆԻ», «ԱԲՐԱՀԱՄ ՋԱՄԲԱՋՅԱՆ ՀԱԿՈԲԻ» ԱՁ-ներում իրականացվող

թեմատիկ ստուգումների մեջ, որոնց շրջանակներում կազմվել են ստուգման ակտ, ՎԻՎ արձանագրություն և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության ծանուցագիր, տրվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշման նախագիծ:

5. Ընդգրկված եմ եղել «ՋԻԱՐՋԻ», «ԱՎԱ ՖԱՐՄԱ», «ՀԵԼՖ ՕՆ» ՍՊ ընկերությունների վերստուգման հանձնարարագրերում, որի շրջանակներում տրվել են վերստուգման տեղեկանքներ, ինչպես նաև «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ում իրականացվող ստուգման մեջ, որը ժամանակավոր կասեցված է:

6. Ընդգրկված եմ եղել «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ում իրականացվող վերստուգման մեջ:

7. Ընդգրկված եմ եղել «Ա.Բ.Ա ՖԱՐՄ», «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ-ներում և «ԼԻՆԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ», «ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԵՂԻՇԵՅԻ», «ԱՐԹՈՒՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԽԻԹԱՐԻ», «ԿԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՇԱՆԻ» ԱՁ-ներում և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ-ում իրականացվող վարչական վարույթներում:

8. Մասնակցել եմ ստուգման ակտի նախագծերի, ստուգման ակտերի, ՎԻՎ արձանագրությունների, վարչական տույժերի, գործուղման զեկուցագրերի և հաշվետվությունների կազմման աշխատանքներին:

9. Բաժնի հետ համատեղ իրականացրել եմ իրազեկման այցեր դեղատներ:

10. Մասնակցել եմ ամսական հաշվետվությունների կազմմանը և գործերի կարմանը:

ՀՀ ԱԱՏՄ Արևմտյան տարածքային կենտրոնի դեղերի շրջանառության վերահսկողության բաժնի փորձագետ՝ Անի Գևորգյան _____

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ՝ _____

_____ Սոնա Մուրադյան